ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

Արզական համայնքի ղեկավարի 2014 թվականի տարեկան

հաշվետվությունը համայնքի բնակչությանը

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն.ՄՈՎՍԵՍՅԱՆ

Հարգելի Արզական համայնքի բնակիչներ

Ձեզ եմ ներկայացնում Արզական համայնքի 2014 թվականի տարեկան հաշվետվությունը: Հաշվետվությունը ներկայացված է հակիրճ, որն իր մեջ կներառի բյուջեի մուտքերի և ծախսերի տարեկան հաշվետվությունն ամբողջությամբ, ինչպես նաև տարվա ընթացքում կատարված աշխատանքները:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Արզական համայնքի 2014թ. բյուջեն հաստատվել է համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 12-ի N 50 որոշմամբ, 83525.3 մլն. դրամ մուտքային և նույնքան գումար ծախսային մասով:

Բյուջեի դիֆիցիտը կազմում է 99004 մլն. դրամ, որը համալրվել է 2013թ. տարեվերջյան ազատ մնացորդով:

- 2014թ.տարեկան նշված պլանով պլանավորվել էր հավաքագրել 13.700.0 մլն. դրամ հողի հարկ, փաստացի հավաքագրվել է 12.544 մլն. դրամ, կամ պլանավորված հավաքագրումը կատարվել է 91.5 %-ով:
- Ընդամենը 420 գյուղացիական տնտեսություն է վճարել իր հողի հարկի ապառքը ամբողջությամբ, պլանավորում ենք 2015 թվականի ընթացքում 100%-ով հավաքագրել նախորդ տարիների ապառքը;
- Գույքահարկը պլանավորված էր հավաքագրել 29.05 մլն. դրամ, փաստացի հավաքագրվել է 18.324 մլն. դրամ, գույքահարկի հավաքագրումը կատարվել է 63.07%-ով:
- Հողի վարձակալությունը պլանավորված էր 1,5 մլն. դրամ, փաստացի հավաքագրվել է 1,569 մլն. դրամ, հողի վարձակալության հավաքագրումը կատարվել է 104.6%-ով:
- Տեղական վճար պլանավորվել էր 2.4 մլն դրամ, փաստացի հավաքագրվել է 1.49 մլն դրամ, կատարվել է 62.0%:
- Հաստատված բյուջեով պլանավորվել էր հավաքագրել 638.5 հազար դրամ տեղական տուրք, փաստացի հավաքագրվել է 700.0 հազար դրամ, կատարվել է 109.63%:
- Հողի իրացումից ճշտված բյուջեով պլանավորվել էր 8.0 մլն. դրամ մուտք, փաստացի մուտքագրվել է 7.26մլն. դրամ:

Պետք է նշել, որ ընդհանուր տարեկան բյուջեն 83.5 մլն. դրամ է, պետական բյուջեից տրամադրվել է 22.16 մլն. դրամ դոտացիա, որը կազմում է բյուջեի 26.53% ը:

2014թ. վարչական բյուջեի եկամուտների հավաքագրումը կատարվել է 77.59 %-ով:

ԱՐԶԱԿԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ՀՈԱԿ-ՆԵՐ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ԾԱԽՍԵՐ

2014թ. ընթացքում Արզական համայնքի բյուջեի միջոցների հաշվին ֆինանսավորվել է աշխատակազմի պահպանման, ծառայությունների, ապրանքների ձեռք բերման հետևյալ ոլորտները՝

Օրենսդիր և գործադիր մարմինների պահպանման համար ծախսեր պլանավորվել էր 31.8 մլն. դրամ, փաստացի ծախսվել է 25.2 մլն. դրամ:

Նշեմ, որ աշխատակազմի թվաքանակն ունի այսպիսի կառուցվածք, այն բաղկացած է 19 աշխատողներից՝ համայնքի ղեկավար, 1 հայեցողական պաշտոն, 10-ը համայնքային ծառայող /երկուսը թափուր պաշտոն/, 6 տեխնիկական սպասարկող անձնակազմ, 1 քաղաքացիական աշխատանքներ իրականացնող:

Համայքում գործում են երեք համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ՝ ՀՈԱԿ-ներ, որոնք ֆինանսավորվում են համայնքի բյուջեից: Ներկայացնում եմ տարվա ֆինանսավորումը ըստ ՀՈԱԿ-ների:

- Արզականի մանկապարտեզ ՀՈԱԿ— պահպանման ծախսեր՝ 10.35 մլն. դրամ, աշխատակազմի թվաքանակը՝ 13 աշխատող, սաների թիվը՝ 54 , տնօրեն՝ Աննա Գևորգյան:
- Արզականի արվեստի դպրոց ՀՈԱԿ --պահպանման ծախսեր՝ 10.14 մլն. դրամ, աշխատակազմի թվաքանակը՝ 14, աշխատող, սաների թիվը՝ 73, տնօրեն Թամարա Խաչատրյան:
- Արզականի գերեզմանատուն ՀՈԱԿ— պահպանման ծախսեր 2.70 մլն. դրամ, աշատողների թվաքանակը՝ 5:
- Համայնքում անասնաբուժական ծառայությունը պատշաճ կազմակերպելու նպատակով համայնքի բյուջեից լրացուցիչ վճարվում է անասնաբուժին ևս 1020.0 հազար դրամ տարեկան աշխատավարձ:

ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

- Խմելու ջրի ընթացիկ վերանորոգման համար ծախսվել է 650.0 հազար դրամ:
- աղբահանություն համար 1.5 մլն. դրամ ,
- լուսավորություն համար 200.0 մլն. դրամ,

• Հանդիսությունների սրահ 15.732 դրամ,

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

• Մշակութային, հիշատակների և տոների օրերին նվիրված միջոցառումների համար ծախսվել է 952.85 հազար դրամ /զորակոչիկներին հուշանվերներ, ամանոր, մայիսի 9-ը, ապրիլի 24 և այլն/:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

• Համայնքի սոցիալապես անապահով խավերին աջակցելու նպատակով համայնքի բյուջեից պլանավորվել և ծախսվել է 4.2 մլն. դրամ, որից / օգնություն համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին՝ 3.2 մլն. դրամ:

ՀՈՂ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

• 2014 թվականի ընացքում կաղմակերպվել է համայնքային սեփականության հողամասերի օտարման երկու աճուրդ վաճառք՝ 2.4 հա գյուղ. Նշանակության հողամաս և 0.15 հա բնակավայրերի հողամաս,որի արդյունքում համայնքի բյուջ է մուտքագրվել 6156500 դրամ:

ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Հսկողություն է իրականացվել առևտրի, հանրային սննդի կենցաղային ծառայությունների ոլորտում գործող օբյեկտների նկատմամբ: Տրվել են ծխախոտի և ոգելից խմիչքների վաճառքի 21, հանրային սննդի 4 , գովազդի տեղադրման 7 թույլտվություններ:

• Իմ և աշխատակազմի անունից, ինչու չէ, նաև համայնքի բնակիչների անունից հավաստիացնում եմ, որ 2015թ. բյուջեն բոլոր տնտեսագիտական դասակարգման հոդվածներով՝ տարվա կտրվածքով կկատարվի 100%-ով:

Արզական համայնքի ղեկավար՝ Ն. Մովսեսյան